**Հավելված N 3**
**ՀՀ կառավարության 2024 թվականի**
**հոկտեմբերի 3-ի N 1584-Ն որոշման**

**ՊԱՀԱՆՋՆԵՐ**
**ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ**

Դիմերես




Դարձերես




1. Մասնագիտական որակավորման վկայականը (այսուհետ՝ ՄՈՎ) պետք է համապատասխանի ISO 7810 և 7816-1 ստանդարտներին: ՄՈՎ-ի ֆիզիկական բնութագրերն

ստուգելու մեթոդները, որոնք նպատակ ունեն ապահովելու դրանց համապատասխանությունը միջազգային չափանիշներին, պետք է համապատասխանեն ISO 10373 ստանդարտին:

2. ՄՈՎ-ը պատրաստվում է 54 x 85.7 մմ չափերի պոլիկարբոնատից և ունի երկու կողմ՝ դիմերես և դարձերես:

3. ՄՈՎ-ի դիմերեսն ունի կապույտ հիմնագույն և պարունակում է հետևյալ տեղեկությունները՝

1) վերևի հորիզոնական շերտագծի վրա՝ շերտագծի ձախ եզրից 21.3 մմ հեռավորության վրա, սպիտակ գույնով, 7.2 կետաչափ տպատառով տպագրված են «ՎԱՐՈՐԴԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ/ DRIVER QUALIFICATION CARD»՝ հայերենով և անգլերենով.

2) Հայաստանի Հանրապետության միջազգային տարբերանշանը «AM»՝ տպագրված նեգատիվով կապույտ ուղղանկյան մեջ.

3) վարորդին վերաբերող տեղեկությունները տպագրվում են անձնավորման դաշտերի հետևյալ համարակալմամբ՝ «1, 2, 3, 4a, 4b, 4c, 4d, 5, 7, 8, 9».

ա. «1. Ազգանունը/Surname».

բ. «2. Անունը/Given name(s)».

գ. «3. Ծննդյան ամսաթիվը և վայրը/Date and place of birth» (հերթականությամբ լրացվում են ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, վայրը).

դ. «4a. Տրման ամսաթիվը/Date of issue» (հերթականությամբ լրացվում են օրը, ամիսը, տարեթիվը).

ե. «4b. Վավեր է մինչև/Administrative expiry date» (լրացվում է վկայականի գործողության ժամկետի ավարտի ամսաթիվը՝ օրը, ամիսը, տարեթիվը).

զ. «4c. Տրված է/issued by» (լրացվում է վկայականը հատկացնող մարմնի ծածկագիրը).

է. «5a. Վարորդական վկայական No/Licence No».

ը. «5b. Վկայական No/Serial No» (9 կետաչափ տպատառերով լրացվում է 8 նիշ պարունակող ծածկագիր՝ 2 տառ, 6 թիվ),

թ. «6. Լուսանկարը/photo» (գունավոր լուսանկար, 3 x 4 մմ չափի).

ժ. «7. Ստորագրությունը/Holder’s signature»,

ժա. «8. Բնակության վայրը/Address» (պարտադիր չէ).

ժբ. «9. Կարգը (Ենթակարգը)/Category (Subcategory)» (լրացվում են տրանսպորտային միջոցների կարգերը (ենթակարգերը):

4. ՄՈՎ-ի դարձերեսը պարունակում է հետևյալ տեղեկությունները՝

1) վարման իրավունքի կարգերը (ենթակարգերը) և դրանց հետ կապված նախնական մասնագիտական որակավորման և պարբերական վերապատրաստման պահանջները բավարարելու ժամկետի վերաբերյալ տեղեկությունները.

2) վարչական բնույթի տեղեկությունների կամ ճանապարհային անվտանգության հետ կապված տեղեկությունների հնարավոր մուտքագրման համար հատկացված մաս (պարտադիր չէ).

3) ՄՈՎ-ի դիմերեսի և դարձերեսի վրա զետեղված համարակալված կետերի բացատրությունը (առնվազն 1, 2, 3, 4a, 4b, 4c, 5a և 5b կետերի անվանումները):

5. ՄՈՎ-ը պետք է ունենա անվտանգության՝ ներառյալ տվյալների պաշտպանության այնպիսի մակարդակ, որը կբացառի քարտի կեղծման կամ բաղկացուցիչ մասերին միջամտության ցանկացած փորձ: Քարտի անվտանգության մակարդակը պետք է համապատասխանի վարորդական վկայականի անվտանգության մակարդակին:

**Հայաստանի Հանրապետության**
**վարչապետի աշխատակազմի**
**ղեկավարի տեղակալ**

**Ա. Խաչատրյան**

07.10.2024

ՀԱՎԱՍՏՎԱԾ Է ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ